

ԻՄ ԱՎԵՐ ՊԱՅԾԱՌՈՒԹՅՈՒՆԸ Արտակ Վարդանյան

*«Տեսքդ պահեմ աչքերիս մեջ»
Մարգո Ղուկասյան*

Իրանի դեսպանատանը արեւելյան հաճելի երաժշտություն է հնչում: Ես եւ դեսպանության աշխատակից պարոն Քազեմ Սեյդիին թեյ ենք խմում, կիսապարսկերեն-կիսահայերեն զրուցում, լրացնում հրավերի համար անհրաժեշտ իմ հարցաթերթիկը եւ ծանոթանում այցելության ծրագրին: Իմ իմացած պարսկերենով կարդում եմ հնգօրյա միջոցառումների ցանկը եւ... հայացքս մեխվում է նախավերջին տողին՝ «Այցելություն Ջուլֆայի Սուրբ Ստեփանոս վանք»։ Ուրեմն ուղեորության ընթացքում անհավատալիորեն ոչ միայն կիրականանա դրացի Իրանը տեսնելու իմ վաղեմի երազանքը, որի մշակույթը, պատմությունն ու լեզուն ինձ անչափ հրապուրել են, այլեւ իրանցի բարեկամների շնորհիվ Սուրբ Ստեփանոսի արաքսամերձ ճանապարհին վերջապես կիրականանա նաեւ Ջուղայի հռչակավոր գերեզմանատունը տեսնելու իմ չարչրկված իղձը...

Անցյալ օգոստոսին Իրանի Իսլամական Հանրապետության Արեւելյան Ատրպատականի նահանգապետարանի հրավերով պարսկերեն ուսումնասիրող հայաստանցի մտավորականների եւ լրագրողների մեր խումբը անմոռաց օրեր անցկացրեց նահանգում: Ծանոթացանք նահանգի Թավրիզ կենտրոնին, նրա պատմական վայրերին եւ մշակույթի օջախներին, հանդիպեցինք հայ համայնքի ներկայացուցիչներին, եղանք Արամյան դպրոցում, Քանդովան քարայրաբնակ գյուղում, հռչակավոր Թադեի վանքում, անցանք Ավարայրի դաշտով... Հինգ օրվա ընթացքում վերջապես պատկերացում կազմեցի, թե ինչ կա իմ ծննդավայրից հորիզոնի վրա այնքան հստակ գծագրվող կապույտ պարսպանման լեռնաշղթայից այն կողմ՝ հարց, որ ինձ հուզում էր դեռեւս մանկությունից: Իրանյան ուղեորությունն ինձ համար մի առանձին խորհուրդ էլ ստացավ, քանզի մտքովս անգամ չէր անցնի, որ ամբողջ յոթանասուն կիլոմետր երկարությամբ ձգվող արաքսամերձ ճանապարհի ողջ երկայնքով արդեն մեկուկես տասնամյակը բոլորող կարոտով ասես ավի մեջ երբեւէ կտեսնեմ իմ գերված բնօրրան Նախիջեւանը՝ Գողթն, Երնջակ,

մասամբ՝ Նախճավան գավառները՝ իրենց հնամյա բնակավայրերով եւ անկրկնելի բնապատկերներով, վերջապես մի անգամ էլ կտեսնեն տարագիր նախիջեւանահայերիս խորհրդանիշ Վիշապասարի հարագատ-հարագատ կամարը, որ տեսիլքի նման կուղեկցի ողջ ճանապարհին...

Մինչեւ ուղեւորության վերջին՝ Սուրբ Ստեփանոս մեկնելու օրը աշխատում էի Ջուղայի մասին ոչ որի հետ չխոսել, չհիշել եւ նույնակ չմտածել այդ մասին. վախենում էի հայտնի ճշմարտությունից՝ մի բան որ շատ ես ուզում՝ չի ստացվում, ինչ որ բան խանգարում է... Եվ այդպես վարվել ինձ ստիպում էր Ջուղայի հետ անցյալի իմ չկայացած հանդիպումների դառը փորձը:

Առաջինը 1986-ի հունիսին էր, երբ հավատալով ռադիոյով եւ հեռուստատեսությամբ հնչող գովազդներին, որոշեցի Հայաստանից Նախիջեւան այցելող զբոսաշրջիկների խմբի մեջ (սեփական ծննդավայր-երկրում՝ զբոսաշրջիկի նսեմ կարգավիճակով) վերջապես տեսնել Ջուղան: Սակայն Նախիջեւան հասնելուն պես ուղեւորության ծրագրում «փոփոխություն» կատարվեց՝ Ջուղան հանվեց ծրագրից «սահմանային գոտու» հանրաճանաչ պատրվակով: Անցանք միայն հին Ջուղայից ոչ հեռու գտնվող Ջուղա գյուղի կողքով, տեսանք միայն այն կարմրավուն ժայռերով լեռնաշղթան, որի հակառակ կողմում ամայացած քաղաքը պետք է լիներ...

Երկրորդը նույն թվականի օգոստոսին էր: «Կապան-Երեւան» գնացքով գիշերով վերադառնում էի Կարմրաքարից: Որոշել էի չքնել եւ կեսգիշերին տեսնել գերեզմանատան խաչքարերից գոնե մի քանիսը՝ հույսս դնելով խորհրդային սահմանապահների լուսարձակների լույսի վրա: Ընկերս, չհաղթահարելով նինջը, քնել էր, ինձ էր միացել Լուսինե անունով մի համակրելի աղջիկ, որ արմատներով նույնպես Գողթնի կողմերից էր... Այդ օրվա ապրումներից իմ «Հայրենաբաղձություն» շարքում ծնվեց «Ջուղա» բանաստեղծությունը.

Կեսգիշեր է, տոթ:
Կապան-Երեւան գնացքի հոգնած ուղեւորները
Նիրհում են արդեն՝
Անվերջ կրկնվող թխկոց-չխկոցից
Եվ «եմիշ» ծախող եմիշագլուխ շրջմուլիկների
Միալար ձայնից մի կերպ ազատված...
Իսկ մենք երկուսով չենք ուզում քնել.

Այնպես ենք ուզում Ձուդա քաղաքը
 Տեսնել այս գիշեր,
 Մեր կորած երկրի քված հեքիաթը
 Լսել այս գիշեր,
 Այնպես ենք ուզում, որ թեկուզ մի պահ,
 Թեկուզ մի վայրկյան
 Փշալարերը շան նման հսկող
 Լուսարձակներն այս
 Հանկարծ, պատահմամբ
 Այս խավար կիրճը լույսով ողողեն,
 Որ գիշերային տեսիլքի նման
Հայտնվի Ձուդան մեր աչքի առաջ՝
 Ծաղկած քարերի հրաշք անտատով,
 Պոմբրոզի ժամով, Սուրբ Գեորգ վանքով...

 Բայց, ավա՛ղ, Ձուդան երազ է մնում,
 Լուսաստղը մարում, եւ լույսն է բացվում,
 Մեր պատուհանից միայն Արաքսն է
 Որդեկորույս մոր իր ողբը երգում...
 Իսկ ընկերուհիս պատուհանի տակ ննջում է արդեն,
 Երագի մեջ է Ձուդա քաղաքի հրաշքը տեսնում...

Եվ հիմա, ուղիղ 15 տարի անց մի՞թե իսկապես կիրականանա իմ երազը: Երկու տխուր նախադեպերի հիշողությունը, համենայն դեպս, ինձ լարված եւ դյուրագրգիռ վիճակում էր պահում եւ ստիպում պատրաստ լինել նաեւ ձախողման:

Ձուդան մեր պատմության ու մշակույթի եզակի դրվագներից է: Արաքսի ձախ ափին, ձախից՝ Ձուդայի, աջից՝ Մաղարդայի լեռնաշղթաների մեջ ամփոփված նեղ կիրճում տեղադրված գրեթե առասպելական այս քաղաքը, որի մասին հիշատակել է դեռես պատմահայր Մովսես Խորենացին, 15-17-րդ դարերում ուներ մինչեւ 40 հազար զուտ հայ բնակիչ: Մինչեւ Շահ Արասի կողմից 1605 թվականի հոկտեմբերին իրականացված բռնագաղթը այստեղ բուռն ծաղկում էին ապրում արհեստներն ու առետուրը: Ձուդայի նշանավոր խոջաները առետրական կապեր էին հաստատել Եվրոպայի, Ասիայի եւ Աֆրիկայի տասնյակ երկրների հետ, եւ հայրենի քաղաքը դարձել էր ոսկերչության, քանդակագործության, ասեղնագործության, մանրանկարչության, գրչարվեստի եւ բազում այլ արհեստների ու

արվեստների զարմանահրաշ կենտրոն: Այստեղ հայ խաչքարագործության եզակի գլուխգործոցներ են ստեղծել քարագործ վարպետներ երկու Գրիգորները, Հայրապետը, Իսրայելը, այստեղ են ստեղծագործել մանրանկարիչներ Հակոբ Ջուղայեցին, Խաչատուր Խիզանեցին, Հովհան Գարգամարգեցին, գրչուհի եւ ծաղկող Մարիամը...

Ջուղայի նշանավոր գերեզմանատան երեք բլուրներում 1648 թվականին ֆրանսիացի ճանապարհորդ Ալեքսանդր Ռոդեսի տվյալներով եղել է շուրջ 10 000 լավ պահպանված խաչքար: 1903-1904 թվականներին Ջուղայի տարածքով անցնող երկաթգծի շինարարությունից հետո խաչքարերի թիվը կիսով չափ նվազել է: Խորհրդային Ադրբեջանի վարած հայատյաց քաղաքականության հետեւանքով խորհրդային շրջանում եւս մեկ անգամ կիսվեց այդ թիվը՝ պատմաբան Արզամ Այվազյանի հաշվումներով 1971-1973 թվականներին այնտեղ մնացել էր 2707 խաչքար, եկեղեցիների եւ Ամենափրկիչ վանքի գերեզմանատներում՝ եւս 250-ը, ինչպես նաեւ շուրջ 1000 խոյածեւ քանդակազարդ եւ պատկերաքանդակներով տապանաքարեր: 1988 թվականից ի վեր եզակի այս հուշարձանախումբը հաճախ էր հայատյացության մոլեռանդ դրսեւորումների թիրախ դառնում, որի ամենաահավոր վկայությունը 1998-ի հոկտեմբերի «բուլդոզերային» վայրենի արշավն էր, երբ օրը ցերեկով գործի դնելով քանդիչ մեքենաները՝ տեղահանվեցին եւ ոչնչացվեցին հայ մշակույթի շուրջ 700 գլուխգործոցներ... Միայն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի նամակին ի պատասխան՝ ՄԱԿ-ի մշակույթի հանձնաժողովին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ին հաջողվեց դադարեցնել ոճրագործությունը:

Վերջապես եկավ Սուրբ Ստեփանոս մեկնելու օրը: Տունդարձի ճանապարհին ճաշեցինք իրանյան Ջուլֆայում, եւ մեզ սպասարկող հարմարավետ ավտոբուսը սլացավ մեզ արդեն ծանոթ Մեղրի-իրանյան Ջուլֆա խճուղու շարունակությամբ:

Ջուղա գյուղը երեսաց միանգամից: Ավելի ճիշտ նախ նկատեցի Վարդուտի միջնադարյան պարսկական դամբարանը, ապա հիշեցի Չորուտի պղնձագույն լեռների փեշերից դեպի Արաքսի հովիտը ձգվող գյուղը, որ տարիներ առաջ տեսել էի Արաքսի հակառակ ափին... Խմբի անդամներին պատմեցի մինչեւ 1970-ականները դեռեւս հայաբնակ այս գյուղի մասին, նրա վերջին տարիների միակ հայ բնակչի՝ Մարիամ մայրիկի մասին, որի ճակատագիրը 1988-ից հետո այդպես էլ անհայտ մնաց ինձ...

Մտել ենք Ծնակուտի կիրճը: Ավտոբուսն այնքան արագ է սլանում, որ հագիվ եմ կարողանում խմբի ուշադրությունը հրավիրել դեպի հին Ջուղայի ակնկալվող ուղղությունը... Իրանյան ավիում հայացքով փորձում եմ որոնել Ջուղայի քարավանատան հետքերը, երբ մեր խմբի կրտսեր մասնակիցների բացականչությունը ստիպում է նայել հակառակ ուղղությամբ: «Երեւ֊ց...» Իսկապես, Ջուղայի գերեզմանատունն է, դեղնավուն բլուրների վրա հստակ երեւում են հեռվից չորացած ծառերի անտառի ճնշող տպավորություն թողնող խաչքարերը՝ մի մասը ուղղաձիգ դեպի երկինք հառնող, մի մասն էլ թեքված ու խոնարհված, ջարդած ու ցրված... Չհասած գերեզմանատուն՝ քաղաքի արեւմտյան պարիսպների հետքերն են: Ուրեմն բուն քաղաքի տարածքն արդեն անցել ենք, ուրեմն քաղաքից գրեթե ոչինչ չի մնացել... չկան իմ հայրենակից եւ բարեկամ Արգամ Այվազյանի գրքերից ծանոթ Ամենափրկիչ վանքը, Պոմբլոգի ժամը, Սուրբ Գեորգ եկեղեցին...

Մտովի տեղափոխվում եմ չորս դար առաջ, այսօրվա ամայի կիրճում տեսնում իրար հերքագայող շարքերով ձգվող Ջուղայի շքեղ տները, պալատներն ու ժամատները, նրա ծաղկուն նռնենիներով ու հսկա թզենիներով լի փթթուն այգիները, բարեկեցիկ ջուղայեցիներին՝ ոսկեկար տարազներով հուրի-փերի աղջիկներին, շքեղ հագուկապով պատվելի խոջաներին, իսկ քաղաքի համայնապատկերի վրա տիրաբար իշխում է Ամենասուրբ Երրորդություն կամ Վերին Կաթան վանքը... Ականջիս Դավիթ Գեղամեցու տաղն է.

*Ջուղա քաղաքն ազնիւ շինած
Քօշք ու սարայքն բարձրացուցած
Եվ գոյնզգոյն ծաղկեցուցած.
Նա հիացումն էր տեսողաց:*

*Եօթն ժամատեղ էր հաստատուած
Եկեղեցիքն էր զարդարած,
Բուրվառնին էր ոսկէջրած,
Ծածկոցներն՝ ոսկէթելած:*

*Աւետարանքն եւ սուրբ խաչերն
Անգին ակամբք էր զարդարած,
Սեղաններն եւ սրբութիւնն
Ուրախութիւն էր նայողաց...*

Մթափվում են գերեզմանատան բլուրների խիստ մոտիկությունից: Վարորդին խնդրում ենք ավտոբուսն արգելակել: Երրորդ բլրի վրա շատ քիչ խաչքար է մնացել, իսկ ամենամեծի՝ երկրորդի մի ստվար հատված ակնհայտորեն ջարդած-տեղահանված եւ տեղափոխված է (հողի գույնն անգամ դա է փաստում), տեղահանված եւ վնասված խաչքարերի մի մասն էլ ոճրագործներն ուղղակի թափված են թողել երկաթգծի վրա...

...Ժամատեղերն խափանեցաւ

Պաշտօնեից ձայնն հատաւ,

Լոյսն ու կանթեղքն խաւարեցաւ,

Պայծառութիւնն աւեր դարձաւ...

Երեք հսկա, սեւաթույր թռչուն, հավանաբար՝ արծիվներ, սավառնում են գետի երկու ափերով, ապա պտտվում գերեզմանատան գլխավերելք...

Ջուղան լուռ է եւ վիրավոր: Այսօր 2001 թվականի օգոստոսի 21-ն է: Նայում են ժամացույցին՝ ժամը 16-ն անց է 10 րոպե: Ամբողջ կյանքում խիղճս կտանջի, երբեք-երբեք չեմ մոռանա այս պահը, երբ կարծես հանդիպեցի իմ մահամերձ հարազատին եւ անհույս վիճակում թողնելով, հեռացա՝ չկարողանալով ոչնչով օգնել նրան... Միաժամանակ, սակայն, աննկարագրելի վեհություն եւ պայծառություն տեսա ամայի բլուրների, ողջ կիրճի վրա, կարծես ամառային արեւի պայծառ լույսը այնտեղ ավելի պայծառ եւ շլացուցիչ էր դառնում...

Հետո... անպատմելի հուզմունքս կարողանում եմ գսպել մինչեւ արաքսամերձ Դարաշամբի Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանք, որը, ի պատիվ մեր արյունակից եւ դրացի երկրի, բազում այլ հայկական հուշարձանների թվում վերականգնել է «Միրասե ֆարհանգի» («Մշակութային ժառանգություն») կազմակերպությունը: Հսկա թթենիներով եւ ուռենիներով շրջապատված պարիսպների մեջ ներփակված հուշարձան-տաճարը իսկապես հայ մշակույթի ինքնօրինակ կոթող է: Մո՞ն եմ վառում Տիրամոր վեհաշուք պատկերի առաջ՝ ինչպես Հայաստանում, ինչպես... ընդամենը մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող Նախիջեւանում... Իսկ Տիրամորն այնքան նման կապուտաչյա իտալուհին, որ վանք էր մտել ճարտարապետ ամուսնու հետ, իմանալով մեր հայ լինելը, ձեռքը մեկնում է դեպի վանքի քանդակագարդ խոյակները եւ ժպտալով ասում. «Very nice! Very beautiful! It's yours, yours!» («Շատ գեղեցիկ եւ հիասքանչ է... Ձերն է, ձերը...»):

Ես գիտեմ, որ եթե բարձրանանք Սուրբ Ստեփանոսի կողքի դեղնավուն լեռնակը, հաստատ կտեսնենք Արաքսին միախառնվող Տղմուտը, Նախիջեանի ջրամբարը, նրա ափին՝ Նախիջեան քաղաքը, նշանավոր Աստապատ գյուղը, բայց, ավա՛ղ, ժամանակ չկա՝ Մեղրիի անցակետում մեզ է սպասում տուն տանող ավտոբուսը...

Հետդարձին, որպես բալասան Ջուղայից ստացած խորախոր վերքին, իրանյան հատվածում կտեսնենք Ջուղայի Տավարածի հայտնի մատուռը՝ կրկին խնամքով նորոգված, եւ կօրհնենք Իրանն ու նրա հարեւանասեր-եղբայրասեր մարդկանց: Մեր անկեղծ երախտագիտությունը կհայտնենք ուղեւորության դեկավար պարոն Հոսեյն Ռահբարիին եւ նրա փոքրիկ օգնական-որդուն՝ Վահիդին, մեր այնքան հոգատար վարորդին՝ թավրիզցի Աբասին, որ, ի դեպ, գործով հաճախ է Նախիջեան մեկնում: «Աբա՛ս, եթե Նախիջեանի կենտրոնական մասերով անցնես, և կես կատակ, կես լուրջ ասում եմ նրան, և եւ կարմիր գոտիով մի ճերմակ-ճերմակ սար տեսնես, իմացիր, դա մեր Գահուկ լեռն է, իսկ նրա կողքին իմ ծննդավայր Ազնաբերդն է. խնդրում եմ բարեւս հաղորդես երկուսին էլ»: Աբասը կրջանա, աջ ձեռքը կդնի աջ աչքին եւ կերդվի՝ «Ռ-ույե չաշմ»՝ «Աչքիս վրա»...

Ջանգեզուրով եւ Վայոց ձորով ձգվող վերադարձի ողջ գիշերը վարորդի խցիկից կլսվի պարսիկ ամենասիրված երգչուհիներից մեկի՝ Հոմեյրայի հոգեզմայլ երգերը, որոնք Իրանի ռադիոյով լսել եմ դեռեւս դարոցական տարիներից: Հայ-իրանական բարեկամությանը նվիրված՝ իմ «Նովրուզի ծաղիկ» շարքում կծնվի նոր բանաստեղծություն՝ «Սուրբ Ստեփանոսի ճանապարհին»: Վաղ առավոտյան տուն հասնելուց եւ աշխատավայր շտապելուց հետո հուզմունքից չեմ կարողանա պատասխանել իմ 12-ամյա զարմուհու «քեռի՛, Օձասարը տեսա՞ր» պարզամիտ հարցին: Իսկ երեկոյան՝ տուն գնալուն պես կզանգահարի իմ բարեկամ Արթուր Բախտամյանը եւ զարմանալիորեն կասի, որ այսօրվա «Կեսգիշերային ճեպըթացը» նվիրված է Ջուղայի խաչքարերին եւ Վայոց ձորի Վարդահովիտ գյուղում բնակվող նրա վերջին հայ բնակչին՝ 92-ամյա Մարիամ մայրիկին: Ես կզարմանամ՝ այսքա՞ն էլ պատահականություն: Արթուրը կհիշեցնի հայտնի ճշմարտությունը՝ պատահականությունների մեջ է օրինաչափությունը... Եվ աչքիս առաջ կրկին կհառնեն Ջուղայի հրաշափառ կիրճը, շլացուցիչ լույսն ու խորհրդավոր բլուրների վրա տիրաբար սավառնող հզոր թեւերով երեք սեւաթույր արծիվները...

ԳԱՌՆԻԿ ՍՎԱԶԼՅԱՆ-100

Այս տարի լրանում է տկն Վերժինեի հոր՝ անվանի հասարակական գործիչ, հրապարակախոս եւ երգիծանկարիչ Գառնիկ Սվազլյանի ծննդյան 100-ամյակը: Նա ծնվել է 1904-ին Կեսարիայում, սովորել է Զմյուռնիայի Մեսրոպյան ազգային վարժարանում եւ ապա՝ տեղի ֆրանսիական գիմնազիայում: 1922-ին թուրքական հալածանքներից ընտանիքը փրկություն է գտնում Հունաստան փախչելով, ապա Եգիպտոս գաղթելով եւ հաստատվելով Ալեքսանդրիայում:

Գառնիկ Սվազլյանը եղել է Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) եգիպտական մասնաճյուղի հիմնադիրներից: Իր գաղափարների համար բազմիցս ձերբակալվել ու բանտարկվել է: 1936 թ. լույս է ընծայել «Ներգաղթը» ֆրանսահայ գաղութի երբեմնի ճգնաժամային կյանքը ներկայացնող թատերգությունը: Այն բեմադրվել է սփյուռքում եւ Հայաստանում: Տարբեր գաղթօջախներում կայացած ներկայացումների հասույթը հեղինակը հատկացրել է Հայաստանում բնակարանների շինարարության ֆոնդին: 1945-ին ընտրվել է եգիպտահայ ազգային խորհրդի կազմում՝ գործնականորեն նախապատրաստելով գաղութահայության ներգաղթը: 1947-ին հայրենադարձվել է Հայաստան, ընդունվել գրողների միություն, ծավալուն հոդվածներով հանդես եկել հանրապետական մամուլում, սակայն վեց ամիսը չբոլորած, 44 տարեկանում դադարել է բաբախել նրա սիրտը: 1965-ին Երեւանում հետմահու լույս է տեսել նրա «Հայրենիքիս համար» ժողովածուն, որտեղ ամփոփված են հեղինակի գրական-հրապարակախոսական ժառանգությունը, քաղաքական երգիծանկարներն ու «ներգաղթը» պիեսը:

Նրա կարճատեւ, բայց բովանդակալից կյանքը հայրենիքին եւ իր ժողովրդին անհուն նվիրվածության վառ օրինակ է, որն առավել թրծվելով տկն Վերժինեի գործունեությամբ այժմ փոխանցվել է վերջինիս դստերը՝ բանասիրական գիտությունների թեկնածու Զնարիկ Ավագյանին:

ՀԱՅՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԻՆ ՀՆԱԶԱՆԴ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բանագետ, ժողովրդագետ, բանահավաք Վերժինե Սվազյանն իր ողջ կյանքը նվիրել է Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված, վերապրող ականատեսների եւ արեւմտահայերի հոգեւոր մասունքների փրկության գործին: Սվազյանը 17-ից ավելի գիտական գրքերի, 200-ից ավելի գիտական հոդվածների, տարբեր գիտաժողովներում կարդացած զեկուցումների հեղինակ է: Հայ ժողովրդական բանահյուսության, ազգագրական նյութերի գրառման գործում անգնահատելի է Վերժինե Սվազյանի ծառայությունը: Աշխատանքային գործունեության 50 տարիների ընթացքում սկսած 1953 թ. նա բառ առ բառ, պատառիկ առ պատառիկ գրառել, ձայնագրել, տեսագրել եւ ուսումնասիրել է մեր կորցրած երկրի՝ պատմական Հայաստանի, Կիլիկիայի եւ Անատոլիայի 70 տեղավայրերից բռնի տարագրված ու Հայաստանում եւ սփյուռքում (Հունաստան, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա, ԱՄՆ, Սիրիա, Լիբանան, Իրաք, Եգիպտոս, Թուրքիա, բալկանյան երկրներ) բնակություն հաստատած Հայոց ցեղասպանության շուրջ 650 վերապրողների տեղեկությունները, փաստացի վկայությունները, նաեւ ժողովրդական երգերը (հայերեն եւ թուրքալեզու)՝ դրանով հանդերձ կորստից փրկելով շատ ու շատ բանահյուսական արժեքներ: Այնքան էլ դյուրին ու անարգել չի եղել բանահավաք Վերժինե Սվազյանի գործունեությունը: Ցեղասպանությունից հրաշքով փրկված վերապրող ականատեսները սովորաբար ինքնամիտ էն եղել, լուռ, իրենց մտորումների մեջ՝ խորասույգ: Այդ խորհրդավոր լռությունը եւս ունեցել է իր պատճառը, քանի որ քաղաքական զանազան պատճառներով չեն կարողացել իրենց անցյալի մասին ազատ ու անկաշկանդ պատմել, գրել: Պետք էր լինել նաեւ լավ հոգեբան՝ ուղիներ գտնելու ու նրանց հոգու խորխորատները թափանցելու համար: Ի վերջո տեղի տալով թախանձագին հորդորներին՝ նրանք պոռթկացող հուզումով կրկին վերապրելով իրենց անցյալը, սկսել են պատմել հիշողության մեջ անթեղած մորմոքուն հուշերը: Այսպես է հավաքել նյութերը Վերժինե Սվազյանը՝ յուրաքանչյուրի հետ ապրելով անցած ողբերգությունը եւ մինչ այսօր շարունակում է նրանց հետ ջերմ ու բարեկամական կապերը:

Վերժինե Սվազյանը ծնվել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում՝ գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ ու բարերար Գառնիկ Սվազյանի ընտանիքում: Դեռ մանկուց Վերժինեն հորից հաճախ է լսել 1915 թ. Եղեռնի մասին հրապարակախոսական ելույթներ ու ճառեր, այդ բոլորը նրա հոգում ձեռնարկել են աշխարհիստիանայից ու մտածելակերպ՝ նպաստելով նրա հետագա գործունեությանը: Երբ Գառնիկ Սվազյանը Եգիպտոսից կազմակերպում է հայրենադարձությունը՝ եւ ընտանիքով հաստատվում Երեւանում, նա իր դստերը՝ Վերժինեին պատգամում է. «Վերժինե, աղջիկս, կուգեմ ըլլաս դու խելացի, աշխատանքով, վարքով բարի, պատիվ բերես քո ծնողքին եւ քո ազգին, հայրենիքին...»: Այս պատգամի հավատարմության առհավատչյան ահավասիկ նրա 17 գիտական գրքերն են, որոնց շնորհիվ հնարավոր դարձավ պահպանել արեւմտահայ բանավոր մշակույթը: Վ. Սվազյանի հավաքած տաղերն ու խաղիկները, որոնք ամփոփվել են մի գրքում, այսօր Դանիել Երաժշտի «Շարական» համույթը վարպետորեն ներկայացնում է հասարակությանը:

Մայիսի 26-ին ՀՀ Գրողների միության տան դահլիճում Ավ. Իսահակյանի անվան գրադարանի տնօրենությունը (տնօրեն՝ Հասմիկ Կարապետյան) կազմակերպել էր հանդիպումն անցերեկույթ՝ նվիրված Վերժինե Սվազյանի կեսդարյա աշխատանքային գործունեությանը: Բան. գիտ. թեկնածու Սվետլանա Վարդանյանը ներկայացրեց Վ. Սվազյանի կյանքն ու գործունեությունը, նրա կատարած դժվարին աշխատանքը: Ելույթ ունեցողները՝ պատմաբան Դերենիկ Վարդումյանը, բանաստեղծ, հրապարակագիր Սասուն Գրիգորյանը, արձակագիր Հրաչյա Մաթեոսյանը բարձր գնահատեցին Վերժինե Սվազյանի աշխատությունները, որոնք դառնալու են վաղվա մեր Հայ դատի ու ցեղասպանությունը հաստատող փաստացի վկայագրեր: Սվազյանի գրքերից մի քանիսը թարգմանվել են ռուսերեն, անգլերեն, ընթացքի մեջ է թուրքերեն թարգմանությունը՝ գնահատանքի խոսքեր ուղղվեցին թարգմանիչներ Անահիտ Գարբինյանին եւ Տիգրան Ծուլիկյանին: Միջոցառմանը ներկա էր վերապրող՝ 95-ամյա վանեցի Վարազդատ Հարությունյանը, որն իր ելույթում նշեց. «Ես բոլոր վերապրածների անունից խորին շնորհակալություն են հայտնում Վերժինեին իր քրտնաջան

աշխատանքի համար, որ նա արձանագրել է հրատարակել է շատ կարելու որ արժեքավոր տեղեկություններ, դրանք եթե չհավաքվեին, պետք է մնային պատմությանն անհայտ» ու երգեց «Դե յամանը»:

Միջոցառումը վարում էր Գայանե Սամվելյանը: Ելույթներ ունեցան երգիչ Պողոս Եղիազարյանը, «Շարական» համույթը: Միջոցառումն ավարտվեց հոբելյարի ամփոփիչ խոսքով, տկն Սվազլյանը պատմեց, թե ինչ դժվարություններով ու տառապանքներով է Թուրքիայի ծերանոցից 60, իսկ ԱՄՆԿի ծերանոցից՝ 40 ականատեսների պատմությունները գրառել: «Այս դահլիճում հիշում եմ իմ վաղամեռիկ հորը, որը հայրենադարձությունից հետո ընդամենը երեք ամիս ապրեց հայրենիքում: Նա Ավ. Իսահակյանի օրոք գրողների միության անդամ դարձավ ու թողեց ինձ մեծ պատասխանատվությամբ մի պատգամ: Հայրս հավաքել էր այն ամենը, ինչ կապված էր մեր ժողովրդի հետ, նրա գործը շարունակեց Սարգիս Հայկունին՝ ուսումնասիրությունները հասցնելով ինչեւ 1908 թվականը: Դրան հաջորդեց Ադանայի կոտորածը, Մեծ Եղեռնը, եւ այդ շրջանին անդրադարձող եւ նյութեր հավաքող չկար... Հորս պատգամն ականջիս հանձն առա հայության բանավոր մշակույթը գրի առնելու ու ձայնագրելու բարդ ու դժվարին գործը, որքան որ կարողացել եմ: Ես դեռ չեմ ավարտել իմ աշխատանքները, շարունակելու եմ: Եղեռնի 90ևամյակի կապակցությամբ լույս կտեսնեն իմ «Հայոց ցեղասպանություն ականատես վերապրողների վկայություններ» գիրքն անգլերենով, նաեւ վերջին տարիներին ԱՄՆ-ում եւ այլ երկրներում հավաքված նյութերի ժողովածուն դարձյալ անգլերենով»:

Վերոհիշյալ ժողովածուները շուտով թուրքերենով եւ ֆրանսերենով թարգմանվելուց հետո կհրատարակվեն:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Verjiné Svazlian



Doctor of Philological Sciences, ethnographer Verjiné Svazlian writing down the tragic memoirs and songs

Verjiné Svazlian, ethnographer and folklorist, was born in 1934 in Alexandria (Egypt) in the family of the writer and public man Karnik Svazlian, himself an eye-witness survivor of Turkish tyranny.

In 1947, she has been repatriated with her parents to the Motherland, Armenia.

In 1956, she has graduated with honours from the Department of the Armenian Language and Literature of the Kh.Abovian Armenian State Pedagogical Institute.

Beginning from the nineteen fifties, she has, on her own initiative, started to write down and thereby saved from a total loss the various folklore creations communicated by the repatriates forcibly deported from Western Armenian, Cilicia and the Armenian-inhabited provinces of Anatolia, as well as the narrated memoirs of the eye-witness survivors of the Genocide.

Starting from 1958, she has worked at the M.Abeghian Institute of Literature of the Academy of Sciences of Armenia. During her post-graduate studies, she has been a M.Abeghian grant-aided student.

From 1961, she has worked at the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of Armenia and, from 1996, also at the Museum-Institute of the Armenian Genocide of the National Academy of Sciences of the Republic of Armenia.

She has maintained her Candidate thesis in 1965 and her thesis for a Doctor's Degree in 1995.

Publications:

"Sarkis Haykouni. Life and Work." Yerevan, 1973 (in Armenian).

"Armenian Folk Tales." Scientific Multivolume Edition (in Armenian):

"Artsakh-Utik." Vol. 6, Yerevan, 1973;

"Taron-Turuberan." Vol. 12, Yerevan, 1984;

"Van-Vaspurakan." Vol.15, Yerevan, 1998.

"Moussa Dagh." Folklore Collection, Yerevan, 1984 (in Armenian) [was awarded the "Honour Certificate" of the Presidium of the Academy of Sciences of Armenia and the Gold Medal "Honorary Denizen of Moussa Dagh" granted by the Moussa Dagh Compatriotic Union].

"Cilicia. The Oral Tradition of the Western Armenians." Yerevan, 1994 (in Armenian).

"Genocide. Oral Evidences of the Western Armenians." Yerevan, 1995 (in Armenian).

"The Genocide in the Memoirs and Turkish-Language Songs of the Western Armenians." Yerevan, 1997 (in Armenian).

"The Genocide in the Memoirs and Turkish-Language Songs of the Western Armenians." Yerevan, 1997 (in Russian).

She is also the author of a number of scientific papers published in the Motherland and in the Diaspora.

She has participated in republican and international conferences, discoursing upon folklore, ethnography and the Armenian Action.

Survivors of The Armenian Genocide

SAM KADORIAN

*born 1907, Hüsenig, Kharpert
(Harpoot)*

They took us from Hüsenig, to Mezre, to Kharpert to Malatia and then, after a couple of days walk, to the shores of the Euphrates River. It was around noon when we got there and we camped. For a while, we were left alone. Sometime later, Turkish gendarmes came over and grabbed all the boys from 5 to 10 years old. I was about 7 or 8. They grabbed me too. They threw us all into a pile on the sandy beach and started jabbing us with their swords and bayonets. I must've been in the center because only one sword got me... nipped my cheek... here, my cheek. But, I couldn't cry. I was covered with blood from the other bodies on top of me, but I couldn't cry. If had, I would not be here today. When it was getting dark, my randmother found me. She picked me up and consoled me. It hurt so much. I was crying and she put me on her shoulder and walked around. Then, some of the other parents came looking for their children. They mostly found dead bodies. The river bank there was very sandy. Some of them dug graves with their bare hands—shallow graves—and tried to bury their children in them. Others, just pushed them into the river, they pushed them into the Euphrates. Their little bodies floated away.

EDWARD BEDIKIAN

born 1902, Sepasdia (Sivas)

There was a girl, a girl who I had befriended on the road, earlier. Her name was Satenig. I remember her very well. She was not too strong. I saw her again in

that basement. In the basement of the school where they had thrown us. She was there. She had a little bit of money and she gave it to me. "Don't let them take me," she said. "Don't let them take me." They would come around everyday and take whoever was dead or very weak. She was not in good shape, she was very weak. I stood her up and leaned on her. Held her up,

so. They came. I was holding her up, leaning her up against the wall. But they saw her and took her... took her...